



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

19.04.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի թիվ ՍՑ-ԷՍ-2018/23

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 02.03.2018թ. թիվ 03/26-3/3838-18 գրությամբ «Նաև Զեններալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 23.02.2018թ. թիվ ԱԿ/ԽԱ/1692-18 գրության հիման վրա 02.03.2018թ. թիվ 03/26-3/3838-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Նաև Զեններալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

2. ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից կողմից ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 23.02.2018թ. թիվ ԱԿ/ԽԱ/1692-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև 19.10.2017թ. կնքված «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) և Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 25.12.2017թ. կնքված թիվ ԳՏՊՏ-63 համաձայնագրով Մատակարարը պարտավորվել էր մինչև 17.01.2018թ. Պայմանագրով նախատեսված կարգով և վայրում (ք.Երևան, Բագրատունյաց 6 նրբ.) Նախարարությանը մատակարարել Case IH magnum 310 մակնիշի թվով 7 տրակտոր (այսուհետ՝ Ապրանք):

Մատակարարի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական պայմանների խախտում, այն է՝ Ապրանքը Մատակարարի կողմից չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված ժամկետում և վայրում:

Հաշվի առնելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի դրույթները՝ Պայմանագիրը 2018 թվականի փետրվարի 16-ից միակողմանի լուծվել է:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ ձեռնարկել միջոցներ «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:»:

Ի լրումն 23.02.2018թ. թիվ ԱԿ/ԽԱ/1692-18 գրության ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 22.03.2018թ. Խորհրդին հայտնել է հետևյալը.

««Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ փաստաբան Վահագն Գասպարյանի 2018 թվականին մարտի 17-ին ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին ներկայացված առարկությունների վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև 19.10.2017թ. կնքվել էր «Պետության կարիքների համար ապրանքի մատակարարման» թիվ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) և 25.12.2017թ. կնքվել էր Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին թիվ ԳՏՊՏ-63 համաձայնագիրը, որի շրջանակներում Մատակարարը պարտավոր էր մինչև 17.01.2018թ. Պայմանագրով

նախատեսված կարգով և վայրում (ք.Երևան, Բագրատունյաց 6 նրբ.) Նախարարությանը մատակարարել Case IH magnum 310 մակնիշի թվով 7 տրակտոր (այսուհետ՝ Ապրանք):

Ինչ վերաբերում է առարկությանը ներկայացված Պայմանագրի 3.2 կետով նախատեսված Գնորդի կողմից Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում գումարի 100% կանխավճարի ուշացմանը, ապա հարկ է նշել, որ Պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետի մինչև 2018 թվականի հունվարի 17-ը երկարաձգման նպատակով համաձայնագիր կնքելու համար հիմք է հանդիսացել 25.12.2017թ. Մատակարարի կողմից գրությամբ ներկայացված կանխավճարի ուշացման հանգամանքը, իսկ նույն գրությամբ և համաձայնագրով Մատակարարը հայտնել և հավաստել է, որ Պայմանագրի 6.5 կետով սահմանված տույժերի մասով Հայաստանի Հանրապետության և Նախարարության նկատմամբ որևէ պահանջ չունի:

Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա տրակտորներից 3-ի մատակարարման ընթացքում խոչընդոտ հանդիսացած անհաղթահարելի ուժի ազդեցության վերաբերյալ Նախարարությանը ներկայացված փաստաթղթի մասով Մատակարարին առաջարկել է այն ներկայացնել հայերեն լեզվով թարգմանված, որը մինչ օրս չի ներկայացվել:

Համաձայն 2017 թվականի հուլիսի 13-ին Նախարարության կողմից հրապարակված ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2 ծածկագրով բաց մրցույթի հրավերով և Մատակարարի հետ կնքված Պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրերի Ապրանքը պետք է մատակարարվեր ք. Երևան, Բագրատունյաց 6-րդ նրբանցք հասցեով, ինչի վերաբերյալ Նախարարության կողմից ինչպես բանավոր այնպես էլ գրավոր բազմիցս տեղեկացվել է Մատակարարին:

Այնուամենայնիվ Նախարարությունը, հաշվի առնելով Ապրանքի մաքսազերծման հետ կապված տարաձայնությունները, միջոցներ է ձեռնարկել առաջացած խնդրին որևէ լուծում տալու ուղղությամբ:

Մասնավորապես դիմել է գնումների ոլորտը համակարգող լիազոր պետական մարմնին՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը, ինչպես նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին պաշտոնական պարզաբանումներ ստանալու նպատակով:

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից ստացված պաշտոնական պարզաբանման համաձայն պարզվել է, որ վերը նշված Պայմանագրով նախատեսված Ապրանքի մաքսազերծումը պետք է իրականացնի մատակարար կազմակերպությունը,

ինչին՝ այդ թվում «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի տնօրենի մասնակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունում հրավիրված խորհրդակցությանից հետո, համաձայնել է նաև «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի տնօրենը:

Ելնելով վերոգրյալից՝ Նախարարությունը ձեռնարկել է անհրաժեշտ բոլոր միջոցները առաջացած տարածայնությունների շուրջ խնդրին լուծում տալու նպատակով՝ փաստորեն դրանով իսկ Ապրանքը Ապավեն Տերմինալի ժամանակավոր պահպանման պահեստից դուրս բերելու ուղղությամբ, սակայն պայմանագրի վերջնաժամկետի օրվա դրությամբ՝ 2018 թվականի փետրվարի 16-ին Ապրանքը Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված հասցե՝ ք. Երևան, Բագրատունյաց 6-րդ նրբանցք չներկայացնելու պատճառով այն Նախարարության կողմից միակողմանի լուծվել է: Պայմանագրի միակողմանի լուծման մասին Մատակարարին տեղեկացվել էր դեռևս ՀՀ ԳՆ աշխատակազմի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 10-ի N ԱԿ/ԽԱ-1/1205-18 գրությամբ, բացի դա նշված գրությունը հրապարակվել է old.gnumner.am կայքում:

Մատակարարի և Նախարարության միջև կնքված Պայմանագրի 2.4.1. կետի համաձայն՝ Վաճառողը պարտավոր է Ապրանքը հանձնել պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով և հասցեով, որը չի իրականացվել:

Մաքսային օրենսգրքի 50-րդ հոդվածի հիման վրա՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության մաքսային մարմիններում հայտարարատու հանդես գալը պայմանավորված է Մատակարարի կողմից մաքսային փաստաթղթերի ձևակերպմամբ, որոնցում Նախարարությունը նշվել է որպես ստացող, այլ ոչ թե որպես ներմուծող: Անկախ ստեղծված իրավիճակից ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը ձեռնարկել է անհրաժեշտ բոլոր միջոցները, հնարավորություն ընձեռելու մատակարարին անհրաժեշտ մաքսային վճարները և ձևակերպումները կատարելու համար: Նշված գործողությունները կատարելուց հետո մատակարարը կարող էր ապահովել Պայմանագրի վերը նշված կետի պահանջը:

Հարկ է նաև նշել, որ Ապրանքի հանձնում-ընդունումը կարող էր իրականացվել միայն Ապրանքը Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված՝ հասցե մատակարարելուց հետո:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր ՀՀ գյուղատնտեսության նախարարության ներկայացուցիչ Միքայել Կարապետյանը:

3. «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը.

«Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն 13.03.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«19.10.2017 թվականին ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու, Գնորդ) և «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Մատակարար-Վաճառող) կնքվել է թիվ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պետական կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիրը: Պայմանագրի ժամկետը երկարաձգվել է մինչև 17.01.2018 թվականը:

Պայմանագրի 3.2 կետով նախատեսվել է Գնորդի կողմից պայմանագրի ուժի մեջ մտնելուց (պայմանագրի ստորագրումից) հետո 10 օրյա ժամկետում գումարի 100% տոկոս կանխավճարի փոխանցում մատակարար-վաճառողին: Գումարի փոխանցումը կատարվել է միայն 28.11.2017 թվականին (ժամկետի խախտում):

Պայմանագրի շրջանակներում մատակարարի կողմից մատակարարվել է սկզբում թվով 4 տրանսպորտային միջոց (տրակտոր) հետագայում 3 տրանսպորտային միջոց մատակարարման ընթացքում խոչընդոտ է հանդիսացել նաև անհաղթահարելի ուժի ազդեցությունը, որի վերաբերյալ փաստաթղթեր ներկայացվել են:

Պայմանագրով նախատեսված ժամկետում տրանսպորտային միջոցները ներմուծվել են Հայաստանի Հանրապետություն՝ մաքսային ձևակերպումներ կատարելու համար, որից հետո նախատեսվել է ապրանքը հանձնել Գնորդին:

ՀՀ ներմուծելուց անմիջապես հետո վաճառողը գրությամբ տեղեկացրել է Գնորդին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը, և հայտնել ապրանքի ընդունման հնարավորության մասին:

Մաքսային մարմնում Գնորդը առնաց մատակարար-վաճառողի համաձայնության մասնակի կատարել է ապրանքի մաքսային ձևակերպումներ, որի արդյունքում ներմուծող, հայտարարատու է հանդես եկել ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

«Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն Գնորդի կողմից վերջինիս անվամբ ապրանքի հայտարարագրման պահից հնարավորություն չի ունեցել ապրանքը տնօրինել և կատարել հետագա գործողությունները:

ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից էլեկտրոնային եղանակով հրապարակված գրությամբ սահմանվել է, որ ապրանքի չմատակարարման դեպքում

պայմանագիրը համարվելու է 16.02.2018 թվականին լուծված: Սակայն պայմանագիրը լուծվել է 15.02.2018 թվականին (լուծվել է ժամկետից մեկ օր շուտ):

ՀՀ ֆինանսների նախարարության կոմից 05.02.2018 թվականի ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ուղղված գրության բովանդակությունից ակնհայտ է, որ ապրանքը փաստացի ընդունվել է, այսինքն՝ մատակարար-վաճառողը հանձնել է ապրանքը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 540-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական կարիքների համար ապրանքները մատակարարվում են պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պետական պայմանագրի (այսուհետ՝ պետական պայմանագիր), ինչպես նաև դրան համապատասխան կնքված պետական կարիքների համար ապրանքների մատակարարման պայմանագրերի հիման վրա: Պետական կարիքներ են ճանաչվում պետական բյուջեի միջոցների հաշվին վճարվող և օրենքով սահմանված կարգով որոշվող Հայաստանի Հանրապետության պահանջմունքները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 528-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնորդը (ստացողը) պարտավոր է կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Նշված նորմերից և փաստերից հետևում է, որ մատակարարման պայմանագրով մատակարար-վաճառողը պետք է մատակարարի համապատասխան ապրանքը Գնորդին, իսկ Գնորդը պարտավոր է կատարել մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող գործողություններ: Գնորդն իրավունք չունի խոչընդոտել վաճառողի կողմից կատարվելիք գործողություններին: Կողմերի հանդիպական պարտավորությունների ենթադրյալ խախտում արձանագրելու դեպքում, դա պետք է բխի բացառապես քաղաքացիաիրավական պատասխանատվության հիմք հանդիսացող մեղքի առկայությամբ, որի առկայությամբ միայն կարող է առաջանալ հետևանք՝ տվյալ դեպքում լուծել պայմանագիրը:

Սույն գործի փաստերից ակնհայտ է, որ մատակարար-վաճառողը պատշաճ կատարել է իր գործողությունները չնայած կանխավճարի ուշ փոխանցման (գնորդի պարտավորությունների խախտում), որոշ մասով անհաղթահարելի ուժի առկայության, ապրանքը ներմուծել է ՀՀ, որից հետո մաքսային մարմնում Գնորդի գործողությունների արդյունքում օբյեկտիվորեն հնարավորություն չի ունեցել ապրանքի այլևս տնօրինել, քանի որ այն հայտարարագրվել է Գնորդի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության անվամբ, որն էլ ըստ փաստաթղթերի հանդիսացել է ներկրող:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 530-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գնորդի (ստացողի) կողմից պայմանագրով սահմանված ժամկետում, իսկ դրա բացակայության դեպքում՝ ապրանքները պատրաստ լինելու մասին մատակարարի ծանուցումն ստանալուց հետո՝ ողջամիտ ժամկետում (տվյալ դեպքում պայմանագրով նախատեսվել է 5 հինգ օրյա ժամկետ, պայմանագրի 5.4 կետ), ապրանքները չընտրելը մատակարարին իրավունք է տալիս հրաժարվել պայմանագիրը կատարելուց կամ գնորդից պահանջել վճարելու ապրանքների համար:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով Գնորդի գործողությունները, մասնավորապես մատակարար-վաճառողի կողմից ապրանքի ՀՀ ներմուծման մասին ծանուցելը և դրան հաջորդող Գնորդի որպես ներմուծող մաքսային ձևակերպումներ կատարելը՝ ապրանքը իր անվամբ հայտարարագրելը հիմք է տալիս եզրակացնելու նաև, որ նման գործողություններով կարող ենք համարել նույնիսկ Գնորդի կողմից ապրանքի ընդունում: Նշված փաստի մասին է «անուղակի» վկայում նաև ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 05.02.2018 թվականի ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ուղղված գրությունը, որով ապրանքը փաստացի ընդունվել է, մատակարար-վաճառողը հանձնել է ապրանքը: Հետևաբար նաև կարող ենք համարել մատակարար-վաճառողի կողմից պարտավորությունները կատարված:

Բացի այդ.

ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 50-րդ հոդվածը սահմանում է մաքսատուրքեր, հարկեր վճարողներ են համարվում հայտարարատուն կամ այլ անձինք, որոնց մոտ առաջացել է մաքսատուրքեր, հարկեր վճարելու պարտավորությունը:

Այս առումով, ԵԱՏՄ մաքսային օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, «Բաց թողնում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ձևակերպվող ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքերը, հարկերը, ... փոխհատուցման

տուրքերը վճարելու պարտավորությունը հայտարարատուի մոտ առաջանում է ապրանքների հայտարարագիրը մաքսային մարմնի կողմից գրանցվելու պահից:

Հատկանշական է, որ ՀՀ ՊԵԿ-ի գրությամբ ևս արձանագրվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության հայտարարատու հանդիսանալու փաստը, այսինքն՝ ամբողջ մաքսային ձևակերպումները կատարվել են Գնորդի անվամբ, իսկ մաքսային ձևակերպումները կատարվում է բացառապես հայտարարատուի կողմից, որով ևս հիմնավորվում է «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի գործողությունների խոչընդոտման փաստը:

Հաշվի առնելով վերագրյալը ակնհայտ է դառնում, որ պայմանագրի լուծումը օրինական չէ, չի բխում պայմանագրից և օրենքի պահանջից, ուստի նկատի ունենալով, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ բողոքի հիմքում դրվել է պայմանագրի լուծումը խնդրում եմ մերժել բողոքը ամբողջությամբ:

«Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ն ի լրումն 13.03.2018թ. ներկայացրած գրությանը 26.03.2018թ. հայտնել է հետևյալը.

«Իմ կողմից 13.03.2018 թվականին ներկայացված առարկությունների վերաբերյալ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ նաև՝ Պատվիրատու, Գնորդ) ներկայացրել է դիրքորոշում: Գտնում եմ, որ ներկայացված դիրքորոշմամբ անուղակի հաստատվում է ներկայացված առարկությունների փաստական հանգամանքները, այդ թվում «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) գործողություններին խոչընդոտելու, Ընկերությանը վնաս պատճառելու փաստերը հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

1) Պատվիրատու 100 % տոկոս կանխավճարի փոխանցում կատարելու պարտավորության խախտման մասով.

Ներկայացված դիրքորոշմամբ Պատվիրատուն հայտնում է. «Ինչ վերաբերում է առարկությամբ ներկայացված Պայմանագրի 3.2 կետով նախատեսված Գնորդի կողմից Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում գումարի 100% կանխավճարի ուշացմանը, ապա հարկ է նշել, որ Պայմանագրով նախատեսված

մատակարարման ժամկետի մինչև 2018 թվականի հունվարի 17-ը երկարաձգման նպատակով համաձայնագիր կնքելու համար հիմք է հանդիսացել 25.12.2017թ.Մատակարարի կողմից գրությամբ ներկայացված կանխավճարի ուշացման հանգամանքը, իսկ նույն գրությամբ և համաձայնագրով Մատակարարը հայտնել և հավաստել է, որ Պայմանագրի 6.5 կետով սահմանված տույժերի մասով Հայաստանի Հանրապետության և Նախարարության նկատմամբ որևէ պահանջ չունի»:

Նման դիրքորոշմամբ Պատվիրատուն ընդունում է իր կողմի պայմանագրի խախտում թույլ տալու հանգամանքը, այնուհետև հղում է կատարում Ընկերության գրությանը, որը վերաբերում է Ընկերության կողմից հետագայում հնարավոր տույժերի կամ տուգանքների պահանջին: Սակայն հարկ է նշել, որ տույժերի մասով սույն գործով քննություն չի կատարվում և այդ գրությունը առհասարակ վերաբերելի չէ սույն գործին: Ավելին՝ Պատվիրատուն նման դիրքորոշմամբ հիմնավորվում է, որ առնվազն գործել է ոչ իրավաչափ:

2) անհաղթահարելի ուժի ազդեցության վերաբերյալ փաստաթղթի մասով.

Հիշյալ փաստաթուղթը պատշաճ կարգով ներկայացվել է Պատվիրատուին անգլերեն և հայերեն տարբերակով, ինչպես ներկայացվել է ՀՀ Գնումների բողոքարկման խորհուրդ՝ փաստաթղթի դարձերեսին հայերեն թարգմանությամբ: Ամեն դեպքում, եթե Պատվիրատուն ընդունում է, որ օտարալեզու է փաստաթուղթը ստացել, և նշում է. «Մատակարարին առաջարկվել է այն ներկայացնել հայերեն լեզվով» (նման փաստ առկա չէ), ապա կարող էր առվազն տեղյակ պահել Ընկերությանը, իսկ Ընկերությունը միշտ պատրաստակամ է եղել հնարավորինս հարցի շուտ լուծման հարցում:

3) ապրանքի մաքսազերծման, Պատվիրատուի որպես հայտարարատու գրանցման մասով.

Ինչպես նշվել է առարկություններում ապրանքը ՀՀ ներմուծելուց անմիջապես հետո վաճառողը գրությամբ տեղեկացրել է Գնորդին՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը և հայտնել ապրանքի ընդունման հնարավորության մասին:

Մաքսային մարմնում Պատվիրատուն առնաց Ընկերության համաձայնության կատարել է ապրանքի մաքսային ձևակերպումներ, որի արդյունքում ներմուծող, հայտարարատու է հանդես եկել ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, իսկ ապրանքի հայտարարագրման պահից հնարավորություն չի ունեցել ապրանքը սեփական նախաձեռնությամբ տնօրինել և կատարել հետագա գործողությունները, այդ թվում ապրանքը հասցե հասցնելը:

Պատվիրատուն նշում է, որ պարզաբանման համար կատարել է համապատասխան հարցումներ, այդ թվում ՀՀ ՊԵԿ, որին ի պատասխան հայտնվել է հայտարարատու հանդես գալու պայմաններում Պատվիրատուի կողմից մաքսային վճարներ կատարելու պարտականության մասին: Հետևաբար, ՀՀ ՊԵԿ-ը՝ լինելով տվյալ դեպքում լիազոր մարմին, տվել է համապատասխան դիրքորոշում, որը չի կատարվել: Ավելին՝ Պատվիրատուն ոչ միայն չի կատարել, այլև չի դադարել հանդես գալ որպես հայտարարատու: Ինչ վերաբերում է Ե. Խաչատրյանի կողմից մաքսավճարի վճարման փաստ ընդունելուն, ապա հարկ է նշել, որ վերջինս չի ընդունել, այլ հայտնել է առ այն, որ իր կողից հայտարարատու հանդես գալու և Ընկերության անվամբ ապրանքի մաքսազերծման ՀՀ ՊԵԿ-ի կողմից իրավական համապատասխան հիմնավորումներով վճարումը հիմնավորելու դեպքում կքննարկվի այդ հարցը:

Ինչ վերաբերում է այն հանգամանքին, որ Պատվիրատուն ընդունում է իր կողմից գնալ և մաքսային մարմնում որպես «ստացող» հանդես գալու փաստը, այլ ոչ թե ներմուծող, գտնում եմ, որ դրանով Պատվիրատուն ապրանքը ընդունել է, հետևաբար 24.01.2018 թվականից ենթակա է առնվազն մինչև ներկա պահը հաշվարկման Ընկերության կողմից կրած վնասները:

Այսինքն՝ նշված մասով ևս Պատվիրատուի կողմից խոչընդոտներ են ստեղծվել, որը Ընկերությունը չէր կարող անտեսել և իրավական քայլեր կատարել ապրանքի փոխանցման մասով: Հետևաբար, Պատվիրատուն իրավունք չունի նման պայմաններում պայմանագիրը լուծել, որն էլ ի վերջո բացառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքը:»:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստին մասնակցում էր «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Վահագն Գասպարյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/23 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության 02.03.2018թ. թիվ 03/26-3/3838-18 գրությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության 23.02.2018թ. թիվ ԱԿ/ԽԱ/1692-18 գրությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Նաս

Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի միջև 19.10.2017թ. կնքված թիվ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 ծածկագրով պայմանագիրը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 17.01.2018թ. ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված թիվ ՌՄ/ԿԱ/-1/409-18 գրությունը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 10.02.2018թ. թիվ ԱԿ/ԿԱ-1/1205-18 գրությունը, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կողմից 25.01.2018թ. թիվ 01/3-2/3429-18 ՀՀ գյուղատնտեսության նախարարությանն ուղղված գրությունը, «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից 13.03.2018թ. Խորհրդին ուղղված գրավոր դիրքորոշումը, ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից 22.03.2018թ. Խորհրդին ուղղված գրավոր դիրքորոշումը.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի միջև 19.10.2017թ. կնքվել է N ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 ծածկագրով գնման պայմանագիր (այսուհետ՝ նաև Պայմանագիր):

Պայմանագրի՝

- 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է նույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և վճարել դրա համար:

- 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

- 2.1.7.1 կետի բ) ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելը էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրից ավելի:

Պայմանագրի Հավելված 1-ով նախատեսված գնման ժամանակացույցի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 60 օր հետո մատակարարել թվով 7 հատ տրակտոր:

Պատվիրատուն 17.01.2018թ. թիվ ՌՄ/ԿԱ-1/409-18 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«2017 թվականի մայիսի 18-ի ՀՀ կառավարության «Գյուղատնտեսական տեխնիկայի կայանի կազմակերպման ծրագիրը հաստատելու մասին» N 20

արձանագրային որոշման 37-րդ կետով նախատեսվում է ՀՀ ներկրել գյուղատնտեսական տեխնիկա:

2017 թվականի մայիսի 18-ի ՀՀ կառավարության N 516-Ն որոշմամբ վերը նշված ծրագրի շրջանակներում ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ նախարարություն) հատկացվել է գումար գյուղատնտեսական տեխնիկա ձեռք բերելու նպատակով:

Վերը նշված տեխնիկայի գնման գործընթացի իրականացման շրջանակներում 2017 թվականի հուլիսի 13-ին տրակտորների ձեռքբերման նպատակով հայտարարվել է ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2 ծածկագրով բաց մրցույթ, որի արդյունքում 2017 թվականի հոկտեմբերի 19-ին կնքվել է ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 ծածկագրով թվով յոթ տրակտորների (այսուհետ՝ ապրանք) մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր) Միացյալ Արաբական Էմիրությունների ռեզիդենտ հանդիսացող «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի հետ (այսուհետ՝ մատակարար): Կնքված պայմանագրի համաձայն նշված տրակտորները պետք է մատակարարվեին 2017 թվականի դեկտեմբերի 26-ին, սակայն անհրաժեշտությունից ելնելով գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան մատակարարման վերջնաժամկետը երկարացվել է մինչև 2018 թվականի հունվարի 17-ը:

2018 թվականի հունվարի 13-ին մատակարարը ապրանքը (թվով 4 միավոր) հասցրել է Երևան քաղաքում գտնվող «Ապավեն Տերմինալ» ՓԲԸ-ի ժամանակավոր պահպանման պահեստ և ծանուցել է նախարարությանը մատակարարված ապրանքը ժամանակավոր պահպանման պահեստից դուրս բերելու գործընթացն ապահովելու անհրաժեշտության մասին:

Նախարարությունը վերը նշված գործընթացն ապահովելու նպատակով դիմել է մաքսային բրոքերական ծառայությանը մաքսային փաստաթղթերի ձևակերպում կատարելու համար: Մաքսային փաստաթղթերի ձևակերպումն իրականացնելիս պարզ է դարձել, որ ներմուծված ապրանքի համար առաջանում է 10 տոկոս մաքսատուրքի վճարման պարտավորություն:

Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ մաքսատուրքերի վճարողներ են համարվում հայտարարատուները, մինչդեռ պայմանագրի 3.1 կետի համաձայն գինը ներառում է վաճառողի կողմից կատարվելիք բոլոր ծախսերը, այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ հայտնել դիրքորոշում վերը նշված մաքսատուրքի վճարումը պայմանագրի կողմերից ում պարտավորությունն է հանդիսանում:»

Ի պատասխան 17.01.2018թ. թիվ ՌՄ/ԿԱ-1/409-18 գրության ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է հետևյալը.

«ՀՀ գյուղատնտեսության նախարարության և «Նաս Զեներալ Թրեյնինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) միջև 19.10.2017թ. կնքված պետության կարիքների համար ապրանքի մատակարարման թիվ ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 պայմանագրի և պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ի համաձայն՝ ապրանքների մատակարարման վայր է հանդիսանում ք. Երևան, Բագրատունյաց 6-րդ նրբ. հասցեն: Նշված պայմանագրի 2.4.3 կետի համաձայն՝ վաճառող Ընկերությունը պարտավորվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք: Միաժամանակ պայմանագիրը որևէ վերապահում չի պարունակում ապրանքների մատակարարման համար անհրաժեշտ մաքսային ձևակերպումների ընթացքում ՀՀ գյուղատնտեսության նախարարության մասնակցության մասին, հետևաբար պայմանագրով Ընկերությունը ստանձնել է դրանում որոշված ժամկետներում և կարգով ՀՀ գյուղատնտեսության նախարարությանը ապրանք մատակարարելու անվերապահ պարտավորություն: Մինչդեռ իրավիճակի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Ընկերությունը, ապրանքների մատակարարումն իրականացնելով մաքսային տերմինալում, և գնորդին հանձնելով, ըստ էության, պետության իրավունքներով ծանրաբեռնված ապրանք, թույլ է տվել պայմանագրի պայմանների այնպիսի խախտում, որը կարող է հիմք հանդիսանալ ապրանքների հանձնման-ընդունման արձանագրությունը չստորագրելու համար (պայմանագրի 5.3 կետ):

Վերոգրյալի ամփոփմամբ գտնում ենք, որ ստեղծված իրավիճակում Ընկերությանը պետք է առաջարկել ինքնուրույն կատարել սեփական ռիսկով ստանձնած պայմանագրային պարտավորությունները օրենքով չարգելված ցանկացած եղանակով:»

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 25.01.2018թ. թիվ 01/3-2/3429-18 գրությամբ հայտնել է հետևյալը.

««Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 50-րդ հոդվածի համաձայն՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողներ են համարվում հայտարարատուն կամ այլ անձինք, որոնց համար առաջանում է մաքսատուրքի և հարկերի վճարման

պարտավորություն: Օրենսգրքի 55-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ մաքսատուրքի և հարկերի վճարման գծով պարտավորությունը կատարվում է մաքսատուրք, հարկեր վճարողի կողմից կամ այն անձանց կողմից, որոնք Օրենսգրքին համապատասխան մաքսատուրք, հարկեր վճարողի հետ կրում են մաքսատուրքի և հարկերի վճարման համապարտ պարտավորություն կամ ԵՏՄ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ այն անձանց կողմից, որոնք կրում են մաքսատուրքի և հարկերի վճարման սուբսիդիար պարտավորություն: Նույն հոդվածի 1-ին կետի 2-րդ պարբերության համաձայն՝ ԵՏՄ անդամ պետությունների ազգային օրենսդրության շրջանակներում կարող է նախատեսվել նաև այլ անձանց կողմից մաքսատուրքի և հարկերի վճարման գծով պարտավորության կատարման հնարավորություն, ինչը ներկայումս Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրության շրջանակներում սահմանված չէ:

Միաժամանակ, Օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի 1-ին և 2-րդ պարբերությունների համաձայն՝ մաքսային ընթացակարգերով ապրանքների ձևակերպման ժամանակ, որպես հայտարարատու կարող է հանդես գալ մասնավորապես ԵՏՄ անդամ պետության անձը, որը հանդիսանում է օտարերկրյա անձի հետ կնքված գործարքի կողմ: Որի հիման վրա ապրանքները տեղափոխվում են Եվրասիական տնտեսական միության մաքսային սահմանով, ինչպես նաև այն անձը, որի անունից կամ հանձնարարությամբ կնքվում է այդ գործարքը:

Հաշվի առնելով վերը շարադրված դրույթները, ինչպես նաև այն, որ մաքսատուրք և հարկեր վճարող հանդիսացող այլ անձինք Օրենսգրքի 55-րդ հոդվածի հիմքով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված չեն, հայտնում ենք, որ Ձեր կողմից ներկայացված գրությամբ նշված՝ Միացյալ Արաբական Էմիրությունների ռեզիդենտ հանդիսացող «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միջև կնքված մատակարարման պայմանագրի հիման վրա ՀՀ մատակարարված ապրանքների համար «Բացթողում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգով ՀՀ գյուղատնտեսության նախարարության կողմից որպես հայտարարատու հանդես գալու պարագայում, վերջինիս համար, Օրենսգրքի 136-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան, մաքսային հայտարարագրի գրանցման պահից առաջանում է ներմուծման մաքսատուրքի և հարկերի վճարման գծով պարտավորություն, որը Օրենսգրքով սահմանված ժամկետում նույնպես ենթակա է կատարման վերջինիս կողմից:

ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը 10.02.2018թ. «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին հայտնել է հետևյալը.

«Տեղեկացվում է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Մատակարար) միջև 19.10.2017թ. կնքված N ՀՀ ԳՆ-ԲՄԱՊՁԲ-17/2-ԳՏՊՏ-54 ծածկագրով գնման պայմանագրով (այսուհետ՝ նաև Պայմանագիր) և Պայմանագրում փոփխություն կատարելու մասին 25.12.2017թ. կնքված թիվ ԳՏՊՏ-63 համաձայնագրով Մատակարարը պարտավորվել է մինչև 17.01.2018թ. Պայմանագրով նախատեսված կարգով և վայրում (ք. Երևան, Բագրատունյաց 6 նրբ.) Նախարարությանը մատակարարել Case IH magnum 310 մասկինիշի թվով 7 տրակտոր (այսուհետ՝ Ապրանք):

Մատակարարի կողմից թույլ է տրվել Պայմանագրի էական պայմաններին խախտում, այն է՝ Ապրանքը Մատակարարի կողմից չի մատակարարվել Պայմանագրով նախատեսված ժամկետում և վայրում: Հաշվի առնելով նշվածը և ղեկավարվելով Պայմանագրի 2.1.7 կետի 2.1.7.1 ենթակետի «բ» պարբերությամբ՝ ծանուցում ենք, որ Մատակարարի կողմից Ապրանքը Պայմանագրով սահմանված մատակարարման հասցեով մինչև 15.02.2018թ. ներառյալ չմատակարարելու դեպքում Պայմանագիրը 16.02.2018թ. համարվում է միակողմանի լուծված:»:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը պարզաբանում ստանալու նպատակով դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե և պատասխան գրությամբ արձանագրվել է, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը հանդիսանում է հայտարարատու, այսինքն՝ ամբողջ մաքսային ձևակերպումները կատարվել են Գնորդի անվամբ, իսկ մաքսային ձևակերպումները կատարվում է բացառապես հայտարարատուի կողմից, այսինքն, Պատվիրատուի կողմից խոչընդոտներ են ստեղծվել Ընկերության հետագա գործողությունների համար, հետևաբար Պատվիրատուն իրավունք չունի նման պայմաններում պայմանագիրը լուծել:

Պատվիրատուի ներկայացուցիչը Խորհրդի անդամի այն հարցադրմանը, որ ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մաքսատանը գրանցվել է որպես հայտարարատու, ինչով է առաջնորդվել՝ մասնավորապես Պայմանագրի որ կետով, Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ Պայմանագրով նման կետ չկա, թեև հավելեց, որ «Նաս Ջեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ի կողմից «Ապավեն Տերմինալ» ՓԲԸ ներկայացված մաքսագերծման

փաստաթղթերում (Транзитная декларация) ստացող (получатель) տողում նշված է եղել ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը, այնուամենայնիվ Նախարարությունը, հաշվի առնելով ապրանքի մաքսագերծման հետ կապված տարաձայնությունները, միջոցներ է ձեռնարկել առաջացած խնդրին որևէ լուծում տալու ուղղությամբ:

- ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրքը)

- 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

- 417-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

- 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

- 528-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ գնորդը (ստացողը) պարտավոր է կատարել պայմանագրին՝ համապատասխան մատակարարված ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

- «Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի մասին» 2017 թվականի ապրիլի 11-ի պայմանագրի 1-ին հավելվածով հաստատված՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսգրքի՝

- 50-րդ հոդվածի համաձայն՝ մաքսատուրքեր, հարկեր վճարողներ են համարվում հայտարարատուն կամ այլ անձինք, որոնց համար առաջանում է մաքսատուրքի և հարկերի վճարման պարտավորություն:

- 55-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին պարբերության համաձայն՝ մաքսատուրքի և հարկերի վճարման գծով պարտավորությունը կատարվում է մաքսատուրք, հարկեր վճարողի կողմից կամ այն անձանց կողմից, որոնք Օրենսգրքին համապատասխան մաքսատուրք, հարկեր վճարողի հետ կրում են մաքսատուրքի և հարկերի վճարման համապարտ պարտավորություն կամ ԵՏՄ անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում՝ այն անձանց կողմից, որոնք կրում են մաքսատուրքի և հարկերի վճարման սուբսիդիար պարտավորություն:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ.

- Ընկերությունը Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ապրանքը ներմուծել է Հայաստանի Հանրապետություն:

- ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը մաքսային մարմնում Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ապրանքի մասով գրանցվել է որպես հայտարարատու:

Խորհուրդը գտնում է, Պատվիրատուի կողմից մաքսային մարմնում Պայմանագրով նախատեսված մատակարարման ենթակա ապրանքի մասով որպես հայտարարատու գրանցվելը՝ խոչընդոտներ է ստեղծել և անհնարին է դարձրել Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորություններն իրականացնելու համար, մասնավորապես՝ Պայմանագրով մատակարարման ենթակա ապրանքը սահմանված ժամկետում և առհասարակ Պատվիրատուին հանձնելու համար:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուն՝ ստեղծված իրավիճակում Պայմանագիրը միակողմանի լուծելով՝ գործել է ոչ իրավաչափ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 02.03.2018թ. «Նաս Զեներալ Թրեյդինգ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական
կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ